



Հայաստանի կենսաբ. հանդես, 3(70), 2018

**ԾԱՌԱԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՐՏԻԶԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՉՊԱՏՄԱՆ ՄԵՋ ԵՎ  
ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

**Մ.Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվ. Բուսաբանության ինստիտուտ  
manikg@mail.ru

Հայաստանի բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում ներմուծված և կլիմայա-վարժեցված շուրջ 1650 անուն ծառաբույսերից մոտ 250-ը պարտիզային ձևեր են: Դրանցից շատերը դեռևս նպատակային չեն օգտագործվում հանրապետության կանաչ տնկարկներում: Տարեցտարի ավելանում են հիմնականում քանակապես, կրկնվում և գրեթե չեն հարստացվում նորերով:

Ուսումնասիրելով մի շարք պարտիզային ձևերի հարմարողականությունը մեր հանրապետության պայմաններին, առանձնացվել են առավել գեղազարդ 40 պարտիզային ձևեր և տրվել դրանց հեռանկարները տարբեր տիպի ու կատեգորիայի կանաչ տնկարկներում նպատակային օգտագործելու համար:

*Ներմուծում – կանաչ տնկարկ – պարտիզային ձև – գեղազարդություն*

Из 1650 интродуцированных и акклиматизированных древесных растений ботанических садов и дендропарков Армении около 250 являются садовыми формами.

Многие из этих видов пока не используются по назначению в зеленых насаждениях страны. Из года в год увеличиваясь в количестве, эти формы в основном повторяются и почти не обогащаются новыми.

В результате изучения адаптации ряда садовых форм в нашей республике отобрано 40 декоративных садовых форм для целенаправленного использования в разных типах и категориях зеленых насаждений.

*Интродукция – зеленые насаждения – садовая форма – декоративность*

About 250 species of 1650 introduced and acclimatized trees and shrubs in Armenia's Botanical gardens and arboretums are garden forms. Many of them are not used properly in the country's green stands. Year after year, they are increasing quantitatively and have not been replaced by new ones.

The adaptation of a number of garden forms has been studied. Forty most ornamental forms were identified as a result of our investigations. Recommendations for their use in green stands of different categories are presented.

*Introduction – green stand – garden form – ornamentation*

Քաղաքները, բնակավայրերը և արդյունաբերական կենտրոնները դժվար է պատկերացնել առանց գեղագարդ տնկարկների, որոնք միաժամանակ բարելավում են շրջակա միջավայրի միկրոկլիմայական և սակիտարահիգիենիկ պայմանները: Դեռևս անհիշելի ժամանակներից մարդիկ, գիտակցելով կանաչ տնկարկների դերն ու նշանակությունը, քաղաքների և այլ բնակավայրերի շուրջ ստեղծել են կանաչ գոտիներ: Մեր օրերում դա կենսական անհրաժեշտություն է համարվում:

Երևանի կանաչապատման վիճակը ներկայիս դեռևս չի բավարարում կանաչ տարածքի կազմակերպման համար ներկայացվող ժամանակակից պահանջները: Տնկարկներն աղքատ են կազմով ու կառուցվածքով, հիմնականում չեն կատարում իրենց սակիտարական, էկոլոգիական և էսթետիկական ֆունկցիաները: Նույն պատկերն ունեն նաև Հայաստանի մնացած քաղաքներն ու բնակավայրերը, որոնք կանաչապատելիս, ծառաբույսերը մեծամասամբ ընտրվել են պատահականորեն, հաշվի չառնելով մի շարք հանգամանքներ: Տարբեր տիպի կանաչ տնկարկներ նախագծելիս և հիմնադրելիս չափազանց կարևոր է հատկապես ծառատեսակների ընտրությունը և ճիշտ տնկումը, որի համար անհրաժեշտ է քաջատեղյակ լինել դրանց գեղագարդ արժանիքներին, կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկություններին, հասակային ու սեզոնային փոփոխություններին [1, 4, 6]: Կանաչապատման համար չափազանց կարևոր հատկանիշ է գեղագարդությունը, որով պետք է օժտված լինեն բոլոր տիպի ու կատեգորիայի կանաչ տնկարկները: Լանդշաֆտային ճարտարապետության և կանաչապատման համար պարտիզային ձևերի առկայությունը մեծ հարստություն է համարվում:

Ներկայիս քաղաքները և բնակավայրերը կանաչապատելիս և ծառերի ու թփերի տեսակաշարի ընտրությունը դժվար է պատկերացնել առանց պարտիզային ձևերի, որոնք, շնորհիվ իրենց հարուստ բազմազանության և բարձր գեղագարդ հատկանիշների, մեծ հեռանկար ունեն կանաչ շինարարության համար: Պարտիզային ձևերը մորֆոլոգիապես խիստ տարբերվում են բնական տեսակներից՝ սաղարթի առանձնահատուկ կառուցվածքով, պտուղներով, տերևների, ծաղիկների ձևով, գունագեղությամբ, չափերով և այլն:

Ըստ սաղարթի ձևի և նպատակային օգտագործման պարտիզային ձևերն ընդունված է խմբավորել հետևյալ կերպ՝

**Բրգածն կամ կոնածն.** ունեն ուղիղ և գեղեցիկ բրգածն կամ կոնածն սաղարթ, որոնք կարող են լինել նեղ բրգածն կամ նեղ կոնածն և լայն բրգածն կամ լայն կոնածն (Նոճի մշտադալար բրգածն – *Cupressus sempervirens f. pyramidalis*, Կաղնի ամառային բրգածն – *Quercus robur f. fastigiata*, Կենսածառ արևելյան բրգածն – *Biota orientalis f. fastigiata* և այլն): Դա կախված է սաղարթի կառուցվածքից, երբ ստորին մասը լինում է նեղ կամ լայն: Այսպիսի սաղարթ ունեցող պարտիզային ձևերը հիմնականում օգտագործվում են ցանկապատերում, ծառուղիներում, ինչպես նաև որպես սուլիտեր: Վերջին ժամանակներս մեր հանրապետությունում լայն կիրառություն ունեն, սակայն շատ քիչ է հանդիպում ծառուղիներում:

**Սյունածն.** երբ ծառապսակը կազմող ճյուղերն ուղղված են դեպի վեր և վերից վար ունեն նույն լայնությունը (Կենի հատապտղային սյունածն – *Taxus baccata f. stricta*, Թույա արևմտյան սյունածն – *Thuja occidentalis f. columnaris*, Տոսախ մշտադալար սյունածն – *Buxus sempervirens f. columnaris* և այլն), սրանք նույնպես օգտագործվում են ցանկապատերում, ծառուղիներում, սուլիտեր և խմբերով: Մեզ մոտ հիմնականում հանդիպում են գծային տնկարկներում:

**Գնդածն կամ օվալածն.** երբ ծառապսակը հավասարապես աճում է և՛ ուղղաձիգ, և՛ հորիզոնական ուղղությամբ՝ ստանալով գնդի տեսք (Թեղի տերևաշատ գնդածն – *Ulmus foliacea f. umbraculifera*, Ռոբինիա կեղծակացիա գնդածն – *Robinia pseudoacacia f. compacta*, Տոսախ մշտադալար գնդածն – *Buxus sempervirens f. globosa* և այլն): Այս պարտիզային ձևերը գեղեցիկ են հատկապես որպես սուլիտեր օգտագործելիս, ինչպես նաև խմբերով: Շատ հաճախ օգտագործվում են մանկական խաղահրապարակներում, նստարանների հարևանությամբ: Բացի գեղեցիկ տեսք հաղորդելուց, կատարում են նաև հովանոցի դեր, շատ են օգտագործվում փողոցային տնկարկներում: Գաճաճ գնդածն տեսակները հիմնականում օգտագործվում են կոմպոզիցիոն ձևավորումներում (օրինակ՝ քարապարտեզներում): Երևանում վերջին ժամանակներս սկսել են օգտագործել փողո-

ցային տնկարկներում, սակայն զբոսայգիներում, խաղահրապարակներում և այլ տիպի ու կատեգորիայի տնկարկներում հանդիպում են դեռևս հազվադեպ:

*Լացոդ*. Երբ ծառապատկան կազմող ճյուղերն ուղղված են դեպի ներքև (Թթենի սպիտակ լացոդ – *Morus alba* f. *pendula*, Կարագանա ծառանման լացոդ – *Caragana arborescens* f. *pendula*, Ուռենի սպիտակ, դեղին, լացոդ – *Salix alba* f. *vitellina pendula*, Կեչի կախված լացոդ – *Betula pendula* f. *pendula* և այլն): Լացոդ պարտիզային ձևերն ավելի վառ արտահայտված են լայնատերևավորների մոտ: Լացոդ պարտիզային ձևերը հիմնականում օգտագործում են ջրային ավազանների հարևանությամբ, որը ցավոք մեր հանրապետությունում շատ քիչ է հանդիպում, օգտագործում են նաև որպես սոլիտեր և խմբերով:

*Գաճաճ կամ ցածրահասակ*. այլ կերպ անվանում են նաև բարձրկանման բույսեր, որոնք հիմնականում աճում են լայնությամբ և առանձնապես աճ չեն տալիս բարձրությամբ:

Կենսածառ արևելյան դեղնավուն գաճաճ – *Biota orientalis* f. *aurea nana*, տոսախ մշտադալար գնդաձև գաճաճ – *Buxus sempervirens* f. *compacta nana*, տոսախ մանրատերև գաճաճ – *B. microphylla* f. *nana*): Սրանք հիմնականում օգտագործվում են փոքրիկ ցանկապատերում, գազոնների անկյուններում: Դրանց միջոցով ամրացնում են հողի վերին շերտը, ինչպես նաև ճարտարապետական կոմպոզիցիոն ձևավորումներում՝ հատկապես շատ են օգտագործվում քարապարտեզներում: Գաճաճ ձևերը, բացի այն, որ գեղեցիկ տեսք են հաղորդում այգիներին, այլ նաև գեղեցիկ ֆոն ստեղծելով, ավելի են ընդգծում իրենց հարևանությամբ գտնվող այլ տեսակներին: Սրանցով կարելի է ծածկել նաև հողի անհարթ և ոչ հարմարավետ հատվածները:

Այգեպարկային ձևավորումներում երբեմն օգտագործում են նաև սաղարթի յուրահատուկ կառուցվածքով պարտիզային ձևեր, որոնք ավելի շուտ ծառապատկան ձևափոխված աղավաղումներ են, սակայն նույնպես բարձր են գնահատվում կանաչապատման մեջ և ունեն լայն կիրառություն: Այդպիսի ձևերից են՝ *օձաձև (virgata)*, *դլորածղուղ (tortuosa)*, *թելանման (filioformis)*, *դլորված (flagelliformis)*, *հյուսածև (viminalis)*, *պարուրածև (spiralis)*, *տձև (monstrosa)* և այլն:

Կանաչ տնկարկներ ստեղծելիս կարևոր է հաշվի առնել տերևների գունավորումը և ձևը: Ծառաբույսերի պարտիզային ձևերն ունեն տեսակին ոչ բնորոշ տարբեր գույնի ու ձևի տերևներ, որոնք հասակային ու սեզոնային փոփոխությունների չեն ենթարկվում: Սրանք ունեն խայտաբղետ, ոսկեգույն, դեղնավուն, կարմրավուն և այլ երանգներ, որոնք ամբողջ վեգետացիայի ընթացքում պահպանվում են (Եղևնի կեռիկավոր արծաթափայլ – *Picea pungens* f. *glauca*, թույա արևմտյան դեղնախայտաբղետ – *Thuja occidentalis* f. *aureo-variegata*, թխկի հովհարածև մուգ-կարմրավուն – *Acer palmatum* f. *atropurpurea*, Կծոխուր սովորական կարմրատերև – *Berberis vulgaris* f. *atropurpurea*, կտտկենի սև դեղնախայտաբղետ – *Sambucus nigra* f. *aureo-variegata*): Ծառ հաճախ տերևների այդ բազմերանգությունը կանաչ տնկարկներում լրացնում է ծաղկող տեսակների բացակայությունը՝ հատկապես ամռան և աշնան ամիսներին:

Երկրագնդի բուսական աշխարհի կազմում շուրջ 40 հազար տեսակ ներկայացնում են ծառաբույսերը (դենդրոֆլորայի ներկայացուցիչները), որոնցից մեր հանրապետության բուսաբանական այգիներում, դենդրոպարկերում և տարբեր տիպի ու կատեգորիայի կանաչ տնկարկներում աճեցվել են մոտ 1650 անուն ներմուծված ծառեր և թփեր: Մեր կողմից կատարված գրականության տվյալների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ համաշխարհային դենդրոբազմազանության կազմում պարտիզային ձևերը ներկայացված են շուրջ 1500 անվամբ, որից ավելի քան 250 հանդիպում է մեր հանրապետությունում [2, 3, 5, 7- 9]:

Հետագա ուսումնասիրություններով պարզվեց, որ հանրապետության կանաչ տնկարկներում պարտիզային ձևերը տարեց տարի ավելանում են հիմնականում բաՆակապես, կրկնվում են և գրեթե չեն հարստացվում նորերով: Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն, 2017թ. գարնանային ծառատունկի ժամանակ 13 վարչական շրջաններում տնկվել է շուրջ 17.500 տնկի, որոնցից պարտիզային ձևերը կազմում են մոտ 5.000, դրանք գլխավորապես ներկայացված են *Robina* և *Thuja* ցեղի պարտիզային ձևերով: Պատկերը մի փոքր այլ է Երևանի բուսաբանական այգում: Վերջին տարիների ընթացքում «Մերմերի փոխանակման ցուցակ»-ից դուրս են գրվել մի շարք գեղազարդ պարտիզային տղ ձևերի սերմեր (*Thuja occidentalis* “*filiformis*”, *Berberis*

*thunbergii* “Babette”, *Cotinus coggygia* “Porpureus”, *Physocarpus opulifolius* “Luteus” և այլն): Փոքրաբանակ լինելու պատճառով դրանք օգտագործվում են միայն Երանի բուսաբանական այգում: Հետագայում պետք է կատարվեն աշխատանքներ այն համալրելու և հարստացնելու ուղղությամբ, որպեսզի ավելի լայն կիրառություն ունենան Երևանի և հանրապետության տարբեր տիպի ու կատեգորիայի տնկարկներում:

**Աղյուսակ 1.** Ճառաբույսերի պարտիզային ձևերի օգտագործման հեռանկարները կանաչապատման մեջ

| Պարտիզային ձև  | Կենսաձև | Սաղարթի ձև | Տերևների, պտուղների և ծաղիկների գունավորում | Օգտագործման նպատակայնությունը կանաչապատման տարբեր տիպի ու կատեգորիայի տնկարկներում |          |                                 |                       |                                       |                           |
|--|---------|------------|---|--|----------|---------------------------------|-----------------------|---------------------------------------|---------------------------|
|  |         |            |   | Սոլիտեր  | Խմբերում | Փորոցային և օճային տնկարկներում | Կենդանի ցանկապատերում | Քարապարտեզներում, արվիական այգիներում | Ուղղաձիգ կանաչապատման մեջ |
| 1  | 2       | 3          | 4   | 5  | 6        | 7                               | 8                     | 9                                     | 10                        |
| <b>Անեղևատերևավոր</b>  |         |            |   |  |          |                                 |                       |                                       |                           |
| <i>Biota orientalis</i> f. <i>globosa</i><br>Կենսածառ արևելյան գնդաձև                | Ծամ     | Գ          | -   | 5  | 5        | 4                               | 5                     | -                                     | -                         |
| <i>B. or.</i> f. <i>aurea nana</i><br>Կ. արև. դեղնավուն գաճաճ                        | Թամ     | Գճ         | +   | 5  | 5        | 5                               | 4                     | 5                                     | -                         |
| <i>B. or.</i> f. <i>fastigiata</i><br>Կ. արև. բրգաձև                                 | Թամ     | Բ          | -   | 5  | 5        | 5                               | 4                     | -                                     | -                         |
| <i>Cryptomeria japonica</i> f. <i>elegans</i><br>Կրիպտոմերիա ճապոնական կրբազեղ       | Ծամ     | Բ          | -   | 5  | 5        | 3                               | 2                     | -                                     | -                         |
| <i>Cupressus sempervirens</i> f. <i>pyramidalis</i><br>Նոճի մշտադալար բրգաձև         | Ծամ     | Բ          | -   | 5  | 5        | 5                               | 4                     | -                                     | -                         |
| <i>Juniperus chinensis</i> f. <i>variegata</i><br>Գիհի չինական խայտաբղետ             | Թամ     | Բ          | +   | 5  | 5        | 4                               | -                     | -                                     | -                         |
| <i>J. sabina</i> f. <i>spicata-aurea</i><br>Գ. կազակական հասկանսկեզույն              | Թամ     | Ա          | +   | 5  | 4        | -                               | -                     | 5                                     | -                         |
| <i>J. sabina</i> f. <i>cupressifolia</i><br>Գ. կ. Նոճիատերև                          | Թամ     | Ա          | -   | 5  | 5        | -                               | -                     | 4                                     | -                         |
| <i>J. communis</i> f. <i>hibernica</i><br>Գ. սովորական իռլանդական                    | Ծամ     | Բ          | -   | 5  | 5        | 5                               | 3                     | -                                     | -                         |
| <i>Picea abies</i> f. <i>inversa</i><br>Եղևի սովորական կախվող                        | Ծամ     | Լ          | -   | 5  | 5        | 5                               | -                     | -                                     | -                         |
| <i>Picea pungens</i> f. <i>glauca</i><br>Եղևի կեռիկավոր արծաթափայլ                   | Ծամ     | Բ          | +   | 5  | 5        | 5                               | -                     | -                                     | -                         |
| <i>Thuja occidentalis</i> f. <i>aureo-variegata</i><br>Թույա արևմտյան դեղնախայտաբղետ | Ծամ     | Ա          | +   | 5  | 5        | 4                               | 4                     | -                                     | -                         |
| <i>Th. occidentalis</i> f. <i>aurea</i><br>Թ. արևմտյան դեղնավուն                     | Ծամ     | Ա          | +   | 5  | 5        | 4                               | 4                     | -                                     | -                         |
| <i>Th. occidentalis</i> f. <i>columnaris</i><br>Թ. արևմտյան սյունաձև                 | Ծամ     | Ս          | -   | 5  | 5        | 5                               | 5                     | -                                     | -                         |
| <i>Th. occidentalis</i> f. <i>globosa</i><br>Թ. արևմտյան գնդաձև                      | Ծամ     | Գ          | -   | 5  | 5        | 5                               | 4                     | -                                     | -                         |
| <b>Լայնատերևավոր</b>   |         |            |   |  |          |                                 |                       |                                       |                           |
| <i>Acer palmatum</i> f. <i>atropurpurea</i><br>Թխկի հովիարաձև մուգ-կարմրավուն        | Ծտ      | Ա          | +   | 5  | 5        | 4                               | -                     | 4                                     | -                         |
| <i>A. pseudoplatanus</i> f. <i>purpureum</i><br>Թ. կեղծսոսիատերև կարմրավուն          | Ծտ      | Ա          | +   | 5  | 4        | 5                               | -                     | -                                     | -                         |
| <i>Hedera helix</i> f. <i>medio-picta</i><br>Բաղեղ սովորական կենտրոնախայտաբղետ       | Լս      | Ա          | +   | -  | -        | -                               | -                     | -                                     | 5                         |

| 1  | 2              | 3              | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|--|----------------|----------------|---|---|---|---|---|---|----|
| <i>Buxus sempervirens f. aureo-limbo</i><br>Տոսախ մշտադալար դեղնաեզրավոր         | Թ <sub>վ</sub> | Ա              | + | 5 | 5 | 4 | 5 | 3 | -  |
| <i>B. sempervirens f. rotundifolia</i><br>Տ. մշտադալար կլորատերև                 | Թ <sub>վ</sub> | Գ              | - | 5 | 5 | 1 | 1 | 5 | -  |
| <i>B. sempervirens f. compacta nana</i><br>Տ. մշտադալար գնդաձև գաճաճ             | Թ <sub>վ</sub> | Գ <sub>ճ</sub> | - | 5 | 5 | 2 | 1 | 5 | -  |
| <i>B. microphylla f. rococo</i><br>Տ. մանրատերև ռոկոկո                           | Թ <sub>վ</sub> | Գ <sub>ճ</sub> | - | 5 | 5 | 1 | 1 | 5 | -  |
| <i>Berberis vulgaris f. atropurpurea</i><br>Կծիխուր սովորական կարմրատերև         | Թ <sub>տ</sub> | Ա              | + | 5 | 5 | 3 | 2 | 5 | -  |
| <i>Betula pendula f. pendula</i><br>Կեչի ելունդավոր լացող                        | Ծ <sub>տ</sub> | Լ              | - | 5 | 4 | 3 | - | - | -  |
| <i>Crataegus monogyna f. rosea</i><br>Սզկի միավարսանդ վարդագույն լիաթերթ         | Ծ <sub>տ</sub> | Ա              | + | 5 | 5 | 3 | - | - | -  |
| <i>Quercus robur f. fastigiata</i><br>Կաղնի ամառային բրգաձև                      | Ծ <sub>տ</sub> | Բ              | - | 5 | 5 | 5 | 4 | - | -  |
| <i>Sambucus nigra f. aureo-variegata</i><br>Կտակենի սև դեղնախայտաբղետ            | Թ <sub>տ</sub> | Ա              | + | 5 | 5 | 3 | 3 | - | -  |
| <i>S. nigra f. laciniata</i><br>Կ. սև կտրտված տերևներով                          | Թ <sub>տ</sub> | Ա              | + | 5 | 5 | 4 | 3 | - | -  |
| <i>Viburnum opulus f. roseum</i><br>Բռնչի սովորական ծյունագունդ                  | Թ <sub>տ</sub> | Ա              | - | 5 | 5 | 4 | 2 | - | -  |
| <i>Weigela florida f. variegata</i><br>Վեյգելա ծաղկող խայտաբղետ                  | Թ <sub>տ</sub> | Ա              | + | 5 | 5 | 2 | 1 | 1 | -  |
| <i>Euonymus japonica f. aureo-variegata</i><br>Իլենի ճապոնական դեղնախայտաբղ.     | Թ <sub>վ</sub> | Ա              | + | 3 | 5 | 5 | 5 | 3 | -  |
| <i>E. jap. f. medio-picta</i><br>Ի. ճապ. կենտրոնախայտաբղետ                       | Թ <sub>վ</sub> | Ա              | + | 3 | 5 | 5 | 5 | 3 | -  |
| <i>Caragana arborescens f. pendula</i><br>Կարագանա ծառնման լացող                 | Ծ <sub>տ</sub> | Լ              | - | 5 | 4 | 2 | - | - | -  |
| <i>Robinia pseudoacacia f. compacta</i><br>Ռոբինիա կեղծակացիա գնդաձև             | Ծ <sub>տ</sub> | Գ              | - | 5 | 5 | 5 | 1 | - | -  |
| <i>Hibiscus syriacus f. totius albus</i><br>Հիբիսկուս սիրիական լիովին սպիտակ     | Թ <sub>տ</sub> | Ա              | + | 5 | 5 | 5 | 3 | - | -  |
| <i>Lonicera japonica f. aureo-reticulata</i><br>Ցախակեռաս ճապոնական ոսկեցանցավոր | Լ <sub>տ</sub> | Ա              | + | - | - | - | - | - | 5  |
| <i>Morus alba f. pendula</i><br>Թթենի սպիտակ լացող                               | Ծ <sub>տ</sub> | Լ              | - | 5 | 5 | 3 | - | - | -  |
| <i>Salix alba f. vitellina pendula</i><br>Ուռենի սպիտակ, դեղին, լացող            | Ծ <sub>տ</sub> | Լ              | - | 5 | 5 | 3 | - | - | -  |
| <i>S. babylonica f. tortuosa</i><br>Ու. բաբելոնյան ոլորված                       | Ծ <sub>տ</sub> | Ա              | - | 4 | 5 | 3 | - | - | -  |
| <i>Ulmus foliacea f. umbraculifera</i><br>Թեղի տերևաշատ գնդաձև                   | Ծ <sub>տ</sub> | Գ              | - | 5 | 5 | 5 | 1 | - | -  |

**Ծանոթություն**

**Կենսաձև (սյունակ 2)** Ծ<sub>տ</sub> – ծառ ասեղևատերև մշտադալար, Ծ<sub>տ</sub> – ծառ տերևաթափ, Թ<sub>տ</sub> – թուփ ասեղևատերև մշտադալար, Թ<sub>վ</sub> – թուփ լայնատերև մշտադալար, Թ<sub>տ</sub> – թուփ լայնատերև տերևաթափ, Լ<sub>վ</sub> – լիան լայնատերև մշտադալար, Լ<sub>տ</sub> – լիան լայնատերև տերևաթափ:

**Սաղարթի ձև (սյունակ 3)** Բ – բրգաձև, Ս – սյունաձև, Լ – լացող, Գ – գնդաձև, Գ<sub>ճ</sub> – գաճաճ, Ա – այլ սաղարթի ձև:

**Օգտագործման նպատակայնությունը կանաչապատման տարբեր տիպի ու կատեգորիայի տնկարկներում (սյունակներ 5, 6, 7, 8, 9, 10)** 5 – զանգվածային օգտագործում, 4 – հաճախակի օգտագործում, 3 – չափավոր օգտագործում, 2 – սահմանափակ օգտագործում, 1 – հազվադեպ օգտագործում:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Գրիգորյան Արծ.Ա.* Գեղազարդ պարտիզագործություն, Եր., ԴՊԱՀ, 276 էջ, 2010:
2. *Գրիգորյան Մ.Մ.* Ծառաբույսերի պարտիզային ձևերը Հայաստանի բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում: «Բուսաբանական գիտությունը ժամանակակից աշխարհում» Երևան, էջ. 291-295, 2015:
3. *Սայաթյան Մ.* Բուսատեսակների հավաքածու (Իջևանի մերձարևադարձային դենդրոլոգիական պարկ (Ծառայգի) /գիտական աշխատություն/: Վանաձոր «ՍԻՄ տպագրություն», 204 էջ, 2010:
4. *Վարդանյան Ժ.Հ., Գատրջյան Գ.Ս., Գրիգորյան Մ.Մ., Փայտյան Յու. Ե.* «Գեղազարդ ծառեր և թփեր կանաչապատման համար»։ Երևան, 362 էջ, 2016:
5. Аннотированный каталог деревьев и кустарников ботанических садов и дендропарков Армянской ССР. Бюлл. Бот. сада АН Арм ССР, 27, 164 с., 1985.
6. *Варданян Ж.А., Мурадян Н.Н., Григорян М.М., Гатрчян Г.М.* Высокодекоративные древесные растения ботанического сада НАН Армении для применения в различных типах озеленения Еревана. Биолог. журн. Армении, LXVIII, 4, с. 22-30, 2016.
7. *Варданян Ж.А., Григорян М.М.* Таксономическое разнообразие садовых форм древесных растений и возможности их интродукции в Армении. Доклады НАН Армении, 116, 3, с. 239-243, 2016.
8. *Деревья и кустарники ССР, I-VI, 1949-1962.*
9. *Колесников А.И.* Декоративная дендрология. М., 704 с., 1974.

Ստացվել է 22.03.2018